ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/204

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Ամետիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ

Գ. Պապոյանի (լիազորագիր տրված՝ 01.09.2020թ.),

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 27.09.2020թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.08.2020թ. թիվ 26/26-1/12633-2020 գրությամբ «Ամետիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 20.08.2020թ. թիվ 23009-2020 գրության հիման վրա 24.08.2020թ. թիվ 26/26-1/12633-2020 գրությամբ նախաձեռնել է «Ամետիս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Ամետիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Ամետիս» ՍՊԸ-ն 08.09.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ամետիս» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հայտարարված ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/108 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և ճանաչվել ընտրված մասնակից:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Ամետիս» ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 15.07.2020թ. «Ամետիս» ՍՊԸ-ին ներկայացվել է ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/108 ծածկագրով ընթացակարգի համար պայմանագիր կնքելու առաջարկ:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 31.07.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է հետևյալը.

15.07.2020թ. «Ամետիս» ՍՊԸ-ին ներկայացվել է ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/108 ծածկագրով ընթացակարգի համար պայմանագիր կնքելու առաջարկ՝ վերջինս 29.07.2020թ. նախարարություն է ներկայացրել կնքված պայմանագրի օրինակները, պայմանագրի կատարման ապահովումը՝ տուժանքի ձևով և որակավորման ապահովման մի մասը՝ կանխիկ փողի ձևով վճարված: Միաժամանակ, «Ամետիս» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ Ընկերության տնօրենի և բանկում ֆինանսական գործունեություն իրականացնելու համար լիազորված անձի մոտ ախտորոշված SARS COV-2 վիրուսի պատճառով վերջիններս գտնվել են և շարունակում են գտնվել մեկուսացման մեջ և իրենց գործողությունները բանկում գործարքներ կատարելու համար սահմանափակված են եղել, ինչի պատճառով «Ամետիս» ՍՊԸ-ն խնդրել է տրամադրել ևս 2 օր լրացուցիչ ժամանակ որակավորման ապահովման մյուս մասը՝ բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու համար:

1.2 կետի համաձայն՝ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ կասեցնել պայմանագրի կնքման գործընթացը և մեթոդական օժանդակություն ստանալու համար դիմել ՀՀ Ֆինանսների նախարարություն:

1.3 կետի համաձայն՝ հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ՀՀ ֆինանսների նախարարությունից պատասխան ստալուն հաջորդող աշխատանքային օրը, ժամը՝ 12:00-ն, ք. Երևան, Կառավարական տուն 2, 611 սենյակ հասցեում:

Իսկ արդեն գնահատող հանձնաժողովի 13.08.2020թ. տեղի ունեցած նիստի արձանագրության 2-րդ կետի համաձայն՝

2.1 կետի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.08.2020թ. ստացվել է համապատասխան գրությունը, համաձայն որի առաջարկվում է առաջնորդվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ:

2.2 կետի համաձայն՝ հաշվի առնելով, որ «Ամետիս» ՍՊԸ-ն մինչ օրս չի ներկայացրել որակավորման ապահովման մնացած մասը, որը վերջինս իր գրությամբ պարտավորվել էր ներկայացնել սահմանված ժամկետից 2 օր ուշ, որոշում է կայացվել, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.5017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը՝ զրկել «Ամետիս» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու իրավունքից:

<u>Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները</u>

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ հանգամանքների վրա.

Ընթացակարգերի հրավերի ՄԱՍ 1-ի 10.2 կետի՝ մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով

ներկայացնում է որակավորման ապահովում՝ շինարարական աշխատանքի գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տասը տոկոսին: Շինարարական աշխատանքի գնման ընդհանուր արժեքը կազմում է 15603770 ՀՀ դրամ:

Որակավորման ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով (հավելված 4), որը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարմանը հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ:

Նույն Ընթացակարգերի հրավերի ՄԱՍ 1-ի 10.3 կետի՝ Պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (հավելված 5.1) կամ կանխիկ փողի ձևով:

Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ: Պայմանագրի ապահովումը այն ներկայացրած անձին վերադարձվում է կնքված պայմանագրով ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում՝ ամբողջական պարտավորությունների կատարման ժամկետը լրանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Հայտնում ենք, որ «Ամետիս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին է ներկայացվել՝ ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/108 ծածկագրով գնման ընթացակարգի հաստատված պայմանագրի օրինակը:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ 15.07.2020թ. «Ամետիս» ՍՊԸ-ին ներկայացվել է ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/108 ծածկագրով ընթացակարգի համար պայմանագիր կնքելու առաջարկ՝ վերջինս 29.07.2020թ. նախարարություն է ներկայացրել կնքված պայմանագրի օրինակները, պայմանագրի կատարման ապահովումը՝ տուժանքի ձևով և որակավորման ապահովման մի մասը՝ կանխիկ փողի ձևով վճարված: Միաժամանակ, «Ամետիս» ՍՊԸ-ն խնդրել է տրամադրել ևս 2 օր լրացուցիչ ժամանակ որակավորման ապահովման մյուս մասը՝ բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու համար:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել պայմանագրի կնքման գործընթացը և մեթոդական օժանդակություն ստանալու համար դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Այնուհետև՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.08.2020թ. ստացվել է համապատասխան գրությունը, համաձայն որի առաջարկվում է առաջնորդվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ հաշվի առնելով, որ «Ամետիս» ՍՊԸ-ն մինչ օրս (այսինքն մինչև նիստի օրը՝ 13.08.2020թ.) չի ներկայացրել որակավորման ապահովման մնացած մասը, որը վերջինս իր գրությամբ պարտավորվել էր ներկայացնել սահմանված ժամկետից 2 օր ուշ, որոշում է կայացվել, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.5017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը՝ զրկել «Ամետիս» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու իրավունքից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում են նկատի ունենալ մի շատ կարևոր հանգամանք.

1. Իսկապես՝ «Ամետիս» ՍՊԸ-ն 29.07.2020թ. նախարարություն ներկայացնելով կնքված պայմանագրի օրինակները, պայմանագրի կատարման ապահովումը՝ տուժանքի ձևով և որակավորման ապահովումը՝ կանխիկ փողի ձևով, խնդրել է՝ տրամադրել ևս 2 օր լրացուցիչ ժամանակ որակավորման ապահովման մյուս մասը՝ բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու համար: Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ գնահատող հանձնաժողովը որոժել է կասեցնել պայմանագրի կնքման գործընթացը և մեթոդական օժանդակություն ստանալու համար դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն:

Սակայն ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Ամետիս» ՍՊԸ-ն մինչ օրս (այսինքն նիստի օրը՝ 13.08.2020թ.) չի ներկայացրել որակավորման ապահովման մնացած մասը, որը վերջինս իր գրությամբ պարտավորվել էր ներկայացնել սահմանված ժամկետից 2 օր ուշ, արդյունքում որոշել այդ հիմքով զրկել «Ամետիս» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու իրավունքից, ապա այս կապակցությամբ հայտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը՝ «Ամետիս» ՍՊԸ-ին որևէ կերպ չի հայտնել, որ 2 օր ժամանակ է տրամադրում որակավորման ապահովման մյուս մասը ներկայացնելու համար:

Ավելին, վերը նշված որոշումների մասին տեղեկատվությունը հրապարակվել է միայն 13.08.2020թ. www.gnumner.am համացանցային կայքում՝ թիվ 4 արձանագրությամբ և

«Ամետիս» ՍՊԸ-ն միայն թիվ ՍՑ-ՆԳ-2020/204 ընթացակարգի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության ժամանակ է տեղեկացել տվյալ որոշումների մասին և, եթե գնահատող հանձնաժողովը տեղեկացներ, որ «Ամետիս» ՍՊԸ-ին տրամադրվում է 2 օր ժամանակ որակավորման ապահովման մյուս մասը ներկայացնելու համար, ապա ՍՊԸ-ն այդ ժամկետում կներկայացներ պահանջվող փաստաթուղթը:

Փաստացիորեն, գնահատող հանձնաժողովի 13.08.2020թ. տեղի ունեցած նիստի արձանագրությամ 2-րդ կետի համաձայն՝ «Ամետիս» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու իրավունքից զրկվել է, քանի որ ՍՊԸ-ն մինչ օրս (այսինքն մինչև նիստի օրը՝ 13.08.2020թ.) չի ներկայացրել որակավորման ապահովման մնացած մասը, որը վերջինս իր գրությամբ պարտավորվել էր ներկայացնել սահմանված ժամկետից 2 օր ուշ, մինչդեռ ինչպես հայտնել ենք, գնահատող հանձնաժողովը այդ գրությանը չի պատասխանել և գրավոր այդ հնարավարությունը չի տրամադրել ՍՊԸ-ին:

2. Եթե ամեն դեպքում բողոքներ քննող անձը սույն ընթացակարգը քննելու արդյունքում գտնի, որ քննությամբ պետք է գնահատվի այն հանգամանքը, որ ընտրված մասնակիցը սահմանված 10-օրյա ժամկետում պարտավորվում էր ներկայացներ՝ պայմանագրի օրինակները, պայմանագրի կատարման ապահովումը և որակավորման ապահովումը՝ ինչը մասնակցի կողմից որակավորման ապահովման մասով՝ թերի է կատարվել, ապա այս պարագայում էլ պետք է ուշադրություն դարձվի այն հանգամանքի վրա, որ «Ամետիս» ՍՊԸ-ն 29.07.2020թ. նախարարություն ներկայացնելով կնքված պայմանագրի օրինակները, պայմանագրի կատարման ապահովումը՝ տուժանքի ձևով և որակավորման ապահովման մի մասը, ապա գնահատող հանձնաժողովը պարտավոր էր 31.07.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ մերժեր «Ամետիս» ՍՊԸ-ի հայտը և 5 աշխատանքային օրվա ընթացքում հիմքերը ներկայացներ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ ինչը Կարգի 45-րդ կետի հստակ պահանջ է, այն է՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ, այնինչ «Ամետիս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է 13.08.2020թ.-ին, իսկ հիմքերը ի հայտ եկել 29.07.2020թ.:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Վերոհիշյալի արդյունքում Ընկերության պայմանագիր կնքելու իրավունքից զրկելը իր հերթին հանգեցեցրել է «Ամետիս» ՍՊԸ-ի մասով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելուն և կանգնեցրել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է «Ամետիս» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/204 ընթացակարգի շրջանակներում 04.09.2020թ. ժամը 10:55-ին և 11.09.2020թ. ժամը 12:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչների մասնակցությունը:

3. <u>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.08.2020թ. թիվ 23009-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Նախարարության կողմից 2020 թվականի հուլիսի 14-ին գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ ԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/108 ծածկագրով կազմակերպված տեխնիկական հսկողության ծառայությունների գնման գործընթացին հայտ է ներկայացրել «Ամետիս» ՍՊԸ-ն և վերջինս ճանաչվել է ընտրված մասնակից: «Ամետիս» ՍՊԸ-ին 15.07.2020թ. ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ, որն ընդունվել է armeps համակարգով և պայմանագրի ներկայացման վերջնաժամկետի ավարտին՝ 29.07.2020թ., վերջինիս կողմից նախարարություն է ներկայացվել կնքված պայմանագրի և իրենց գործողությունները բանկում գործարքներ կատարելու համար սահմանափակված են եղել, ինչի պատճառով Ընկերությունը խնդրել է տրամադրել ևս 2 օր լրացուցիչ ժամանակ որակավորման ապահովման մյուս մասը՝ բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու համար, որը 13.08.2020թ. օրվա դրությամբ չի ներկայացվել»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ ներկայացնում է Ընկերության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/204 ընթացակարգի շրջանակներում 04.09.2020թ. ժամը 10:55-ին և 11.09.2020թ. ժամը 12:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/204 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/204 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հայտարարվել է ՀՀ ԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/108 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ամետիս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել «Ամետիս» ՍՊԸ-ն, այնուհետև որոշվել է, հիմք ընդունելով Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը, վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.07.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության՝

- 1.1 կետի համաձայն՝ «Ամետիս» ՍՊԸ-ին 15.07.2020թ. armeps համակարգի միջոցով ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ, սակայն պայմանագրի կնքման վերջնաժամկետի ավարտին՝ 29.07.2020թ., Ընկերության կողմից Ընկերության կողմից նախարարություն է ներկայացվել կնքված պայմանագրի օրինակները, պայմանագրի կատարման ապահովումը՝ տուժանքի ձևով, և որակավորման ապահովման մի մասը՝ կանխիկ փողի ձևով: Միաժամանակ Ընկերությունը տեղեկացրել է, որ Ընկերության տնօրենի և բանկում ֆինանսական գործունեություն իրականացնելու համար լիազորված անձի մոտ ախտորոշված SARS COV-2 վիրուսի պատճառով վերջիններս գտնվել են և շարունակվում են գտնվել մեկուսացման մեջ և իրենց գործողությունները բանկում գործարքներ կատարելու համար սահմանափակված են եղել, ինչի պատճառով «Ամետիս» ՍՊԸ-ն խնդրել է տրամադրել ևս 2 օր լրացուցիչ ժամանակ որակավորման ապահովման մյուս մասը՝ բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու համար:
- 1.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է հաշվի առնելով ստեղծված իրավիճակը կասեցնել պայմանագրի կնքման գործընթացը և մեթոդական օժանդակություն ստանալու համար դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն:
- 2.1 կետի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.08.2020թ. ստացվել է համապատասխան գրություն, համաձայն որի առաջարկվել է առաջնորդվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ:
- 2.2 կետի համաձայն՝ հաշվի առնելով, որ «Ամետիս» ՍՊԸ-ն մինչ օրս չի ներկայացրել որակավորման ապահովման մնացած մասը, որը վերջինս իր գրությամբ պարտավորվել էր ներկայացնել սահմանված ժամկետից 2 օր ուշ, որոշում է կայացվել, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.5017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը՝ զրկել «Ամետիս» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու իրավունքից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.08.2020թ. թիվ 26/26-1/12633-2020 գրությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 20.08.2020թ. թիվ 23009-2020 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Ամետիս» ՍՊԸ-ի 08.09.2020թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա

ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերությամբ սահմանվում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին: Ընդ որում շինարարական ծրագրերի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման դեպքում սույն պարբերությամբ նախատեսված ապահովման չափը հավասար է շինարարական աշխատանքների գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տաս տոկոսին:

Ընթացակարգերի հրավերի ՄԱՍ 1-ի 10-րդ կետի 10.2 ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնում է որակավորման ապահովում՝

շինարարական աշխատանքի գնման համար սահմանված կարգով հաստատված և փորձաքննություն անցած նախագծային փաստաթղթերով նախատեսված արժեքի տասը տոկոսին: Շինարարական աշխատանքի գնման ընդհանուր արժեքը կազմում է 15603770 ՀՀ դրամ:

Որակավորման ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով (հավելված 4), որը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարմանը հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ:

Ընթացակարգերի հրավերի ՄԱՍ 1-ի 10-րդ կետի 10.3 ենթակետի համաձայն՝ Պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի (հավելված 5.1) կամ կանխիկ փողի ձևով:

Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 20-րդ աշխատանքային օրը ներառյալ: Պայմանագրի ապահովումը այն ներկայացրած անձին վերադարձվում է կնքված պայմանագրով ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման դեպքում՝ ամբողջական պարտավորությունների կատարման ժամկետը լրանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից հայտարարվել է ՀՀ ԿԳՄՍՆԳՀԾՁԲ-20/108 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ամետիս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.07.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել «Ամետիս» ՍՊԸ-ն, այնուհետև որոշվել է, հիմք ընդունելով Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը, վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.07.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության՝

- 1.1 կետի համաձայն՝ «Ամետիս» ՍՊԸ-ին 15.07.2020թ. armeps համակարգի միջոցով ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ, սակայն պայմանագրի կնքման վերջնաժամկետի ավարտին՝ 29.07.2020թ., Ընկերության կողմից նախարարություն է ներկայացվել կնքված պայմանագրի օրինակները, պայմանագրի կատարման

ապահովումը՝ տուժանքի ձևով և որակավորման ապահովման մի մասը՝ կանխիկ փողի ձևով: Միաժամանակ Ընկերությունը տեղեկացրել է, որ Ընկերության տնօրենի և բանկում ֆինանսական գործունեություն իրականացնելու համար լիազորված անձի մոտ ախտորոշված SARS COV-2 վիրուսի պատճառով վերջիններս գտնվել են և շարունակվում են գտնվել մեկուսացման մեջ և իրենց գործողությունները բանկում գործարքներ կատարելու համար սահմանափակված են եղել, ինչի պատճառով «Ամետիս» ՍՊԸ-ն խնդրել է տրամադրել ևս 2 օր լրացուցիչ ժամանակ որակավորման ապահովման մյուս մասը՝ բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու համար:

- 1.2 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է հաշվի առնելով ստեղծված իրավիճակը կասեցնել պայմանագրի կնքման գործընթացը և մեթոդական օժանդակություն ստանալու համար դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն:
- 2.1 կետի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 12.08.2020թ. ստացվել է համապատասխան գրություն, համաձայն որի առաջարկվել է առաջնորդվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ:
- 2.2 կետի համաձայն՝ հաշվի առնելով, որ «Ամետիս» ՍՊԸ-ն մինչ օրս չի ներկայացրել որակավորման ապահովման մնացած մասը, որը վերջինս իր գրությամբ պարտավորվել էր ներկայացնել սահմանված ժամկետից 2 օր ուշ, որոշում է կայացվել, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.5017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը՝ զրկել «Ամետիս» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու իրավունքից:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.07.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Ամետիս» ՍՊԸ-ին ***15.07.2020թ. Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ***, սակայն պայմանագրի կնքման վերջնաժամկետի ավարտին՝ 29.07.2020թ., Ընկերության կողմից նախարարությանն են ներկայացվել կնքված պայմանագրի օրինակները, պայմանագրի կատարման ապահովումը՝ տուժանքի ձևով, և որակավորման ապահովման մի մասը՝ կանխիկ փողի ձևով: Միաժամանակ Ընկերությունը տեղեկացրել է, որ Ընկերության տնօրենի և բանկում ֆինանսական գործունեություն իրականացնելու համար լիազորված անձի մոտ ախտորոշված SARS COV-2 վիրուսի պատճառով վերջիններս գտնվել են և շարունակվում են գտնվել մեկուսացման մեջ, և իրենց գործողությունները բանկում գործարքներ կատարելու համար սահմանափակված են եղել, ինչի պատճառով «Ամետիս» ՍՊԸ-ն խնդրել է տրամադրել ևս 2

օր լրացուցիչ ժամանակ՝ որակավորման ապահովման մյուս մասը՝ բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու համար:

Միաժամանակ արձանագրում եմ, որ գործում առկա են ***Eco Sense լաբորատորիայի կողմից 28.07.2020թ. տրված թիվ 10438997 լաբորատոր հետազոտությունների արդյունքները, որտեղ նշվում է, որ «Ամետիս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Պապոյան Տիգրանի, SARS COV-2 վիրուսի ՌՆԹ-ի որոշումը դրական է:***

Այսպիսով՝ Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ***ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:***

Ամփոփելով վերը նշած փաստերը, համադրելով դրանք գործում առկա նյութերի հետ՝ արձանագրում եմ, որ Ընկերությունն օբյեկտիվորեն զրկված է եղել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ներկայացրած գնային առաջարկի չափով Պատվիրատուին որակավորման ապահովում ներկայացնելու հնարավորությունից, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Ամետիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.08.2020թ. թիվ 26/26-1/12633-2020 գրությամբ «Ամետիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**